ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
2024-2029ԹԹ.

ՆԱԽԱԲԱՆ

Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոցի 2024-2029թթ. Զարգացման ծրագիրը<<զարգացող ծրագիր>> կազմվել է ՀՀ <<Կրթության մասին օրենք, ՀՀ<<Հանրակրթության մասին օրենք>>, ՀՀ օրենքը ՊՈԱԿ-Ի մասին, <<Երեխայի իրավունքների մասին>> ՀՀ օրենք, <<Լեզվի մասին ՀՀ օրենք>>, ուսումնական հաստատության կանոնադրության կետերի իրավական հիմքերով, ԿԳՄՍ Նախարարի 22.09.2022 թ-ի 35-Ն հրամանի համապատասխան՝ հաշվի առնելով մանկավարժական, աշակերտական և ծնողական համակազմերի ձեռքբերումներն ու բացթողումները և դպրոցում առկա հիմնախնդիրները:

Դպրոցի զարգացման ծրագիրը նախնական աշխատանքային փաստաթուղթ է՝ հիմնված դպրոցի ներկայիս վիճակի վերլուծության, ՀՀ ԿԳՄՍ Նախարարության ներկայացրած հանրակրթության զարգացման առաջնահերթությունների, դպրոցի համակազմի, նորարարությունների ներդրման, ապագայի ցանկալի տեսլականին հասնելու գործողությունների ակնկալվող վերջնարդյունքների

ներկայացմամբ:
Զարգացման ծրագրում ընդգրկված նպատակների ու խնդիրների իրագործմանը հասնելու հիմքը <<Կրթության զարգացման պետական ծրագրի>> սահմանած դրույթներն են:
Մարդը երկրի զարգացման հիմնական ռեսուրսն է, իսկ կրթությունը այդ զարգացմանը հասնելու հիմնասյունն է:
Պետական քաղաքականության հիմքը կրթության ոլորտում դպրոցն է, որի գլխավոր նպատակն է ձևավորել զարգացած, հայրենասեր, պետականամետ մտածողությամբ անհատ:
Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն:
Ցանկանում ես ունենալ հզոր պետություն՝ ունեցիր արհեստավարժ մանկավարժություն և պետականամետ մտածողությամբ աշակերտական համայնք:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

15.08.2013 թվականին <<Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում.
Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 30.05.2011թ.հ.617-Ա/Ք հրամանով տրվել է լիցենզիա, դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.
Առաջին աստիճան-280 տեղ
Երկրորդ աստիճան-440 տեղ
2021 թվականից դպրոցն իրականացնում է

<<Ներառական կրթություն>>

Ներառված սովորողների թիվը՝15

Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոցն ունի ԿԳՄՍՆ կողմից հաստատված պարտադիր առկայության և գործածության ենթակա բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը.

1-Պետական գրանցման վկայական

2-Լիցենզիա՝ ըստ կրթական ծրագրերի աստիճանի և սահմանային տեղերի

3-Դպրոցի կանոնադրություն

4-Առարկայական ծրագրեր

5-Ներքին կարգապահական կանոններ

6-Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան

7-Հաշվետվություն դպրոցի ամենամյա գործունեության մասին

8-Դպրոցի շենքի սեփականության վկայական

9-Սովորողների շարժի մատյան

10-Սովորողի անձնական գործ

11-Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան

12-Աշխատողների հրամանագիրք

13-Աշակերտների հրամանագիրք

14-Աշխատողի անձնական գործ

15-Դպրոցի մանկավարժական, առարկայական մեթոդական միավորումների, ծնողական, աշակերտական խորհուրդների արձանագրությունների մատյաններ

16-Դպրոցի ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշիվ

17-Հաստիքացուցակ
18-Տարիֆիկացիոն ցուցակ
19-Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան:
Դպրոցը բաղկացած է 2 մասնաշենքից, սակայն գտնվում է վթարային 2-րդ աստիճանում, եռահարկ է, սակայն մասնաշենքի 3-րդ հարկերը չեն շահագործվում՝ ելնելով անվտանգության նկատառումներից.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

-Հմուտ և արհեստավարժ մանկավարժական կոլեկտիվ
-Առանձնահատուկ մոտեցում յուրաքանչյուր սովորողի նկատմամբ
-Ժողովրդավարական աշխատաոճ
-Ոսուցիչ-աշակերտ ճիշտ փոխհարաբերություններ
-Առաջին և երկրորդ աստիճանների կրթական մակարդակի բարձր ցուցանիշ
-Կամավոր ատեստացիա անցած 2 մանկավարժներ

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

-Աշակերտական թվաքանակի նվազում
-թեքահարթակների բացակայություն
-սանհանգույցի անմխիթար վիճակ
-տարակարգ չունեցող մանկավարժներ
-կամավոր ատեստավորումից ուսուցիչների խուսափելը
-առարկայական կաբինետների բացակայություն
-համակարգչային սարքավորումների պակաս
-SMART կաբինետի բացակայություն
-հագեցած մարզագույքով մարզադահլիճ
-միջոցառումների համար նախատեսված դահլիճ
-դպրոցական կայքէջի բացակայություն

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին դպրոցում կիրականցվի ներքին գնահատում, որը տարեկան հաշվետվությունների հետ կտեղադրվի պաշարների շտեմարանում և դպրոցի պաշտոնական կայքէջում: Նմանատիպ աշխատանքները միտված են դպրոցի ծավալած գործունեությունը ավելի թափանցիկ դարձնելու նպատակով:

Դպրոցն 2021թ-ից իրականացնում է ներառական կրթություն, ներառված են 15 աշակերտներ:

Դպրոցում իրենց մանկավարժական գործունեությունը ծավալում են 25 մանկավարժներ, բոլորն էլ ունեն բարձրագույն կրթություն, իսկ 2 մանկավարժ անցել են կամավոր ատեստացիա և ստանում են հավելավճար:

Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված խորհուրդներ: Խորհուրդները կունենան իրենց կանոնադրությունը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունները:

Դպրոցի ուսումնական միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներից կառանձնացնեմ հետևյալները.

-Նոր չափորոշիչներով դասերի վարում

-ՏՀՏ-ի կիրառում ուսումնառության ընթացքում

-Նյութատեխնիկական բազայի արդիականացում:

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակներն ապահովող միջոցառումներից կարևոր են ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստացիայի գործընթացին և աջակցությունը դպրոցի կողմից՝ ուսուցիչների նախապատրաստումը տարակարգի::Հաստատությունը կրթություն տրամադրում է կրթական 2 աստիճաններում՝

տարրական և հիմնական:Սակայն 2026 թ-ի ծրագրով նախատեսված է դպրոցը դարձնել միջնակարգ՝ նոր շենքային պայմաններով, ըստ ծրագրի կառուցվելու է նոր շենք, սա էլ իր հերթին կլուծի բազմաթիվ խնդիրներ, որոնք ծառացած են դպրոցի առաջ: Ներկայիս շենքային պայմանները չեն համապատասխանում և ոչ մի ստանդարտի, մասնավորապես ներառված սովորողների համար ստեղծում են բազմաթիվ խոչընդոտներ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ

Ուսումնական հաստատության հանրակրթական հիմնական ծրագրերի հիմքում դրված է սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացը, այսինքն՝ ուսումնական գործընթաց և դաստիարակչական գործընթաց:Ուսումնական հաստատությունում ուսւոմնական գործընթացի առաջնային կարևորությունը ուսման որակն է:Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և հավասար կրթություն ստանալու մատչելիությունը: Որակյալ կրթություն ապահովելու համար պետք է օգտագործել ուսուցման կազմակերպման ժամանակակից մեթոդները, իսկ որակյալ կրթություն տրամադրելու հիմքում պետք է դնել մի քանի առաջնային սկզբունքներ.

-Գիտելիքների մատուցում նոր ՀՊՉ-ին համապատասխան

-Մոտիվացնող միջավայրի ապահովում

-Միջառարկայական բովանդակային համագործակցություն

-Ուսուցման որակի կառավարման նոր համակարգի ներդրում:
Նոր ՀՊՉ-ով սահմանվում են հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝
-գիտելիք
-հմտություն
-դիրքորոշում
-արժեքային բաղադրիչ
Ժամանակակից աշակերտակենտրոն դպրոցում անհրաժեշտ է սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու հմտություններ:
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ
-Առանձնահատուկ ուշադրություն դարձնել ուսուցման որակի բարձրացմանը
-Տանել աշխատանքներ դպրոցում ուսումնադաստիարակչական մակարդակի բարձրացման ուղղությամբ
-Մանկավարժական համակազմի որակի բարձրացում
-Ուսուցիչների մասնակցությունը տարաբնույթ մասնագիտական դասընթացներին
-Ուսումնամեթոդական ժամանակակից գրականությամբ ապահովելը
-Մանկավարժներին խրախուսել կրթության ոլորտում տված բարձր ցուցանիշների համար
-Փորձի փոխանակում սկսնակ և փորձառու մանկավարժների միջև
-Ուսուցիչների մասնակցությունը տարբեր մրցութային ծրագրերին

-Դասավանդման և ուսուցման նոր ու այլընտրանքային մոտեցումներ
-Ուսման որակի բարելավմանն ուղղված աշխատանքները սկսել տարրական դասարաններից: Ուսումնական հաստատությունում առկա նպատակներն ու խնդիրները փոխկապակցված են՝ ուստի նպատակներին հասնելու կարևոր գրավականներից է մոտիվացնող միջավայրի ստեղծումը:Կարծում եմ այդպիսի միջավայրի առկայության դեպքում բոլոր նպատակներն կդառնան իրականություն և էլ ավելի ու ավելի դպրոցը կձգի աշակերտին դեպի կրթությունը և ի վերջո կհասնենք այն բանին, 21-րդ դարի սովորողը կգիտակցի, որ կրթված անհատը մեր հասարակության լիիրավ ու լիարժեք անդամն է:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի պատասխանատուներն են՝ տնօրենը, փոխտնօրենները, մեթոդմիավորման նախագահները, ուսուցիչները, դասղեկները, գրադարանավարը, որոնց ճիշտ և փեխներգործուն աշխատանքի արդյունքում դպրոցը կունենա ցանկալի արդյունք:Վերը նշված կառույցները պետք է աշխատեն համաձայնեցված՝ լրացնելով միմյանց:Անհրաժեշտության դեպքում հաստատության գործունեության մեջ կատարվող և հանրակրթության քաղաքականության ոլորտում իրականացվող փոփոխությունների հետևանքով կարող են փոփոխվել նաև պատասխանատուները:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատման գործիքները պետք է ծառայեն

յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները:Ցուցանիշներն ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալներ և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: <<Հանրակրթության մասին>> օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:
Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական: Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է:Ներքին գնահատման մասնակիցներն են՝ վարչական, մանկավարժական աշխատողները, սովորողներն ու ծնողները:
Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:
Դպրոցի զարգացման ծրագրի կատարման վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրությանը համապատասխան: